



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՐԻՄՍԻԱՍՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԸ ՀԻՐԸՆԿԱԼԵՑ
 ԼԵՈՆ ԹԱՇՃԵԱՆԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍԸ**

Եթե մեր եկեղեցական հաստատությունները, հոգեմտաւոր սնունդի մատակարարման կողքին, դարեր շարունակ եղած են նաեւ մշակոյթի կեդրոն, Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարանը այս իմաստով ալ հաւատարիմ է մեր դարաւոր անաւորութեանց:

Արդարեւ, մէկ ամսուան ժամանակամիջոցի մը մէջ երկրորդ անգամ ըլլալով, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահը հիւրընկալեց ցուցահանդես մը՝ Լիբանանի Այնճար հայկական անանէն հրաւիրուած Լեւոն Թաշճեանի լուսանկարներու ցուցահանդեսը: (Առաջինն էր հայրենի գեղանկարիչ Արմէն Ատիլիսանեանի ցուցահանդեսը):

Լեւոն Թաշճեանի ցուցահանդեսը կազմակերպուած էր Մուսա Լերան Հայրենակցական միութեան կողմէ եւ կը վայելէր Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնը: Բացումը տեղի ունեցաւ Ուրբաթ, 15 Յունիսի երեկոյեան, ապա շարունակուեցաւ Շաբաթ, 16 Յունիսի ամբողջ օրը:

Ցուցահանդեսին պաշտօնական բացման պահուն, կազմակերպիչ միութեան անունով ոռջոյնի խօսք արտասանեց Սեւակ Զէնտիրճեան. ան ներկայ հարիւրաւոր հանդիսականներուն հակիրճ կերպով ներկայացուց Լեւոն Թաշճեանի կեանքի ուղին, որ մարզիկին ու լուսանկարողի կողքին, ընդգրկած է ծառայութիւն Արցախի բանակին ու մասնակցութիւն՝ լիբանանցի լրագրող Քարմէն Լապաքիի հռչակաւոր «Հայերը Լիբանանի մէջ» վաւերագրական ժապաւենին պատրաստութեան, որ անցեալ տարի այս երկրին մէջ շահեցաւ լաւագոյն վաւերագրական ժապաւենի մրցանակը: Ապա, ան հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը, որպէսզի ուղղէ իր սրտի խօսքը:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց ներկաները եւ բարձր գնահատեց Մուսա Լերան հայրենակցական միութիւնը, որ ազնիւ մտածումը ունեցած է Լիբանանէն հրաւիրելու Լ. Թաշճեանը: Ան նաեւ գնահատանքով արտայայտուեցաւ Լեւոնի ոսպնեակին միջոցով հանրութեան հրամցուող պատկերներուն ու անոնց խորհուրդին մասին, շեշտելով, որ անոնք բոլորիս կը յուշեն մեր անցեալն ու մեր ժառանգութեանց պահպանման յանձնառութիւնը: Առաջնորդ Սրբազանը նաեւ վեր առաւ Ազգային Առաջնորդարանիս մշակութային առաքելութիւնը եւ դրուատիքով անդրադարձաւ այն իրողութեան որ բազմահարիւր հայորդիներ ընդառաջած են մեր հողերուն կանչին ու ահա իրենց ներկայութեամբ գործնապէս կը քաջալերեն Լեւոն Թաշճեանի տասնամեակներու վաստակը:

Լեւոն Թաշճեան ծանօթ անուն է մասնաւորաբար լիբանանահայերուն. 70ական տարիներուն, իբրեւ Յ.Ս.Ը.Ս.ական մարզիկ, ան նուաճած է Լիբանանի երկար վազքի ախոյեանութիւնը ու հաստատած մրցանիշներ: Աւելի ուշ, ան համակուած է լուսանկարչական ոսպնեակին գրաւչութեամբ ու զայն լծած՝ հայրենի բնաշխարհն ու պատմական յուշակոթողները «քաղելու» գործին: Անոր հետաքրքրութեան կեդրոնը սոսկ քարն ու բնութեան գեղեցկութիւնները չեն, այլ մղում կ'առնեն ազգային վստմ ապրումներէ ու կը հետապնդեն նոյնքան վստմ նպատակներ. իր իսկ բառերով՝ ան կ'ուզէ ակնդիրին հրամցնել պատկերները այն դարաւոր ժառանգութիւններուն, որոնք հայունն են եղած ու այսօր ալ են, հակառակ անոր, որ անոնցմէ ստուար մաս մը կը մնայ Թուրքիոյ կողմէ բռնագրաւուած մեր հողերուն վրայ: Ահա թէ ինչու լուսանկարչական այս ցուցահանդէսը կը կրէր «Մեր Հողերը...» ընդհանուր խորագիրը:

Ցուցահանդէսը բազմահարիր այցելուներու առիթ ընծայեց հաղորդակից դառնալու Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ, ներկայ Հայաստանի ու Արցախի կիսաքանդ թէ վերանորոգուած, բայց միշտ թանկարժէք մեր ժառանգութիւններուն: Անոնցմէ շատեր ձեռնունայն տուն չվերադարձան, այլ ունեցան գեղատիպ լուսանկարներէն օրինակներ:

WESTERN PRELACY HOSTED PHOTO EXHIBITION BY LEVON TASHJIAN

On Friday, June 15, and Saturday, June 16, the Western Prelacy hosted a photo exhibition by Levon Tashjian at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall. The exhibition took place under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and was organized by the Mousa Dagh Compatriotic Union.

During the opening on Friday evening, welcoming remarks were made by organizing committee member Sevag Kendirjian who introduced Mr. Tashjian and his works to the guests and subsequently invited the Prelate to offer his remarks. The Prelate welcomed the guests and commended the organizers as well as Levon Tashjian for the images of our homeland he has captured which connect us to our past and encourage us to uphold our heritage. The Prelate also spoke of the mission of the Prelacy to preserve our culture and applauded the guests who with their presence had demonstrated their support and encouragement of this mission.

The exhibit offered the opportunity for hundreds of guests to view and purchase photographs portraying historic Armenia, Cilicia, modern Armenia, and Artsakh.